



Ձեկույց

«Ընտրությունը քոնե է» հասարակական կազմակերպության՝ 2005թ. սեպտեմբերի 25-ին՝ Երևանի Կենտրոն և Արաբկիր համայնքներում կայացած ՏԻՄ ընտրությունների ընթացքում իրականացրած տեղական դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ

27 սեպտեմբերի, 2005թ.

Երևանի Կենտրոն և Արաբկիր համայնքներում ՏԻՄ ընտրությունները նախորդ փուլի (սեպտեմբերի 18-ին կայացած) համեմատ առավել հանգիստ, խաղաղ ընթացք ունեցան:

Ընտրողների համեմատաբար պակաս ակտիվությունը, կազմակերպության գնահատմամբ, քվեատուների հիասթափության, իրենց ձայնի կարևորությունը չգնահատելու, ընտրություններից՝ հասարակության կողմից լուրջ ակնկալիքների բացակայության հետևանք են:

ԸՔ հկ դիտորդները սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունները դիտարկել են թիվ Երևանի Արաբկիր և Կենտրոն համայնքների 4 և 9 ընտրատարածքների բոլոր 101 ընտրատեղամասերում: Դիտարկվել են ընտրական հանձնաժողովների գործողությունները, ընտրակարգի պահպանումը, տեղամասերի ներսում և դրսում տիրող մթնոլորտը:

Չնայած ընտրատեղամասերում տիրող համեմատաբար խաղաղ մթնոլորտին՝ այդուհանդերձ ԸՔ դիտորդների կողմից քվեարկության օրը արձանագրվել են մի շարք թերություններ:

Արձանագրվել են հետևյալ մտահոգիչ փաստերը՝

- Ընտրողների ցուցակներում դարձյալ հայտնաբերվող անճշտությունները
- Քվեարկության գաղտնիության սկզբունքի համատարած խախտումը
- Ընտրակարգի խախտումները
- Դիտորդների իրավունքների սահմանափակումները
- Վստահված անձանց իրավունքների չարաշահումը
- Տեղամասային կենտրոնների անհարմարությունները
- Ընտրական օրենսդրության՝ նախընտրական քարոզչությանը վերաբերող՝ դրույթների խախտումները:
- Անօրինական քարոզչության դեպքերը:

Ընտրողների ցուցակների անճշտությունները

Որպես դրական երևույթ պետք է նշել ՏԻՄ ընտրությունների նախորդ փուլի համեմատ ընտրացուցակների բարվոք վիճակը: Սա խոսում է այն մասին, որ լիազոր

մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից ժամանակին իրականացրած գործողությունների շնորհիվ հնարավոր է ունենալ ճշգրտված ընտրացուցակներ:

Ընտրությունների երկարաժամկետ դիտարկման արդյունքում արդեն իսկ արձանագրվել են բազում փաստեր, որոնք հրապարակվել են մինչ քվեարկությունը, և կոչ է արվել համապատասխան մարմիններին ժամանակին արձագանքել և ճշգրտումներ կատարել: Մեր կոչերից հետո էլ դարձյալ քվեարկությանն անմիջապես նախորդող օրերին արձանագրված թերությունները չէին կարող չանդրադառնալ ընտրացուցակների որակի վրա:

- Ընտրատեղամասերի նկարագրությունում նշված ընտրողների և ընտրացուցակներում ընդգրկված ընտրողների թվերը չէին համապատասխանում: Օրինակ՝ թիվ 9/37 տեղամասում տարբերությունը շուրջ 700-ի էր հասնում:
- Կենտրոն համայնքի ընտրացուցակներից շատերը ընտրություններին անմիջապես նախորդող օրերին դեռևս կիսատ էին, չէին ընդգրկում տեղամասերի բնակավայրերի մի զգալի մասը, ժամանակին ստորագրված և կնքված չէին լիազոր մարմնի ստորաբաժանման կողմից: Կից չէին փակցվել տեղեկանքներ՝ ցուցակներում անձշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետի, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին: Ընտրություններից երկու շաբաթ առաջ թիվ 9 ԸԸՀ-ն դեռևս չուներ ընտրացուցակները: Կենտրոն համայնքի ընտրողների ցուցակները նույն ընթացքում չկային ինտերնետային կայքում ևս:
Հետևաբար օրենքով սահմանված ժամկետներում ընտրացուցակների անձշտությունները վերացնելու վերաբերյալ խոսք լինել չի կարող:
- Ընտրողների անունները հաճախ էին կրկնվում նաև վերջնական ցուցակներում, մինչդեռ շատ ընտրողների անուններ դուրս էին մնացել ցուցակներից: Միայն թիվ 9/36 տեղամասի ընտրացուցակներում հայտնաբերվել են ընտրողների անունների բազում կրկնություններ: Այսպես՝ Բենիկ Գևորգյանի անունը (Թումանյան 28-20 հասցեում գրանցված) կրկնվել է 640, 641 համարներում, Սիրանուշ Գաբրիելյանի անունը (հասցեն՝ Մոսկովյան 131-72)՝ 956, 957 համարներում, Ավետիք Թամեյանի անունը (հասցեն՝ Մոսկովյան 33) 1140, 1141 համարներում, Լուսինե Ստեփանյանի անունը (հասցեն՝ Սայաթ-Նովա 8-35)՝ 1612, 1613 համարներում, Կովա Մարտիրոսյանի անունը (հասցեն՝ Սայաթ-Նովա 10-2)՝ 1633, 1634 համարներում, Սուրեն Առաքելովի անունը (հասցեն՝ Սայաթ-Նովա 12-22)՝ 1765, 1766 համարներում:
- Թիվ 9/15, 9/1, 9/3, 9/6 ընտրատեղամասերում ընտրողների թիվը 2000-ից ավել էր, ինչը «ԸՕ»-ի պահանջի խախտում է: Այսպես՝ 9/1-ում ընտրողների թիվը 2400 էր, 9/3-ում՝ 2170, 9/6-ում՝ 2338, 9/15-ում՝ 2145: Ընդ որում, թիվ 9/3 տեղամասում, թեև ընտրողների հավելյալ թվին, ՏԸՀ-ն ստացել էր ընդամենը 2140 քվեաթերթիկ:
- Քվեարկության օրը թիվ 9/45 տեղամասում ընտրացուցակներում հայտնաբերվել են ընտրողների անուններ, որոնք տասնհինգ և ավելի տարիներ առաջ վաճառել են իրենց բնակարաններն ու այլևս նշված հասցեներում գրանցում չուներին:
- Թիվ 9/27 տեղամասում շատ ընտրողներ, չգտնելով իրենց անուններն ընտրացուցակում, չդիմեցին դատարան: Օրինակ՝ Համբարձումյան քույրերը: Այս տեղամասում շատ ընտրողներ բողոքում էին, որ իրենց տան անդամների մի մասն ընդգրկված են թիվ 9/27, իսկ մյուս մասը՝ թիվ 9/19 տեղամասերում:
- Թիվ 4/17 տեղամասում ընդգրկված Ա. Խաչատրյան 27/1 շենքի բն. 7-ի բնակիչ Դոնարա Մելքունյանը և նույն շենքի բն. 24-ի բնակիչ Ժասմինա Նազարյանը 1980 թվից գրանցված են տվյալ հասցեներում, բայց ընդգրկված չէին

ընտրացուցակներում: Նրանք հրաժարվեցին դատարան դիմել՝ իրենց ընտրելու իրավունքը վերականգնելու համար: Նմանատիպ փաստեր են արձանագրվել շատ ընտրատեղամասերում:

- Ընտրացուցակները ստորագրել և կնքել էին համայնքների ոստիկանության բաժինների պետերը, մինչդեռ ՀՀ ԸԾ 11-րդ հոդվածի 5-րդ կետով պահանջվում է, որ դրանք պետք է ստորագրվեն լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից:

Քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտումը

ՏԻՄ ներկա ընտրություններում ընտրագործընթացների թափանցիկության ապահովումը համատարած ձևով բառացիորեն է մեկնաբանվել՝ քվեարկության արդյունքները բաց, դիտարկելի դարձնելով:

Դա արվել է գերազանցապես միտումնավորությամբ, երբ ընտրական հանձնաժողովների անդամները ծանոթացել են ընտրողների քվեարկության արդյունքներին՝ մինչ քվեաթերթիկները քվեատուփերը գցելը: Այսպես՝

- Բաց քվեարկություն էր ընթանում թիվ 4/5 տեղամասում, քանզի քվեաթերթիկները կնքող ՏԸՀ անդամը՝ Սուսաննա Սկրտչյանը, բաց քվեաթերթիկները ծալելու պատրվակով շարունակաբար միտումնավոր ձևով դիտարկում էր քվեարկության արդյունքները և հետո միայն կնքում: Նա թույլ էր տալիս ընտրողների քվեաթերթիկը գցել քվեատուփը՝ առանց հանոզվելու՝ ընտրողի՝ տվյալ տեղամասում հաշվառված լինելու մեջ:
- Նմանատիպ համատարած բաց քվեարկություն է ընթացել Արաբկիրի թիվ 4/8, 4/16, 4/26, 4/15, 4/10 տեղամասերում, թիվ 9 ընտրատարածքի համարյա բոլոր տեղամասերում:
- Թիվ 9/36 տեղամասում ՏԸՀ՝ կնքելու համար պատասխանատու անդամը քվեաթերթիկը ծալելու պատրվակով ոչ միայն բացում և դիտարկում էր քվեարկության արդյունքները, այլև՝ հաճախակի նշումներ անում դրանց վերաբերյալ:
- Բաց, վերահսկելի քվեարկությանն էին նպաստում նաև նոր քվեախցերը: Բոլորովին բաց, գոնե մասամբ չվարագուրված, որևէ կերպ ընտրողին մեկուսացման հնարավորություն չընձեռող քվեախցերը ՏԻՄ ընտրությունների փորձաշրջանում, մեր կարծիքով, քննություն չբռնեցին, քանի որ հնարավորություն էին ընձեռում կողմնակի անձանց, հանձնաժողովների անդամներին դիտարկելու ընտրողների քվեարկության արդյունքը:

Ընտրակարգի խախտումները

- Քվեաթերթիկը կնքող ՏԸՀ անդամները կնքում էին բաց, չծալված քվեաթերթիկները՝ միաժամանակ դիտարկելով և վերահսկելելով արդյունքները: Դա ընտրողների կամարտահայտության վրա ներազդելու ակնհայտ միջոց էր:
- Թիվ 4/5 տեղամասում մինչ տեղամասի բացվելն ու քվեարկության սկիզբը ՏԸՀ անդամների միջև վիճակահանությամբ պարտականությունների բաշխում չի կատարվել: ՏԸՀ նախագահը, խախտելով «ԸԾ»-ի պահանջը, ինքն է որոշել, թե ՏԸՀ անդամներից ո՞վ ինչ պետք է կատարի:
- Թիվ 4/8 տեղամասում ՏԸՀ նախագահը ընտրող Լենդրուշ Հովհաննիսյանին թույլ է տվել քվեարկել սոցիալական քարտով:

- Անձնագրի պատճենով քվեարկության փորձ է կատարվել թիվ 4/5 տեղամասում: Ընտրացուցակի 285 համարի տակ հաշվառված Կարեն Սեդրակյանը, անձնագրի պատճենը ՏԸՀ-ին ներկայացնելուց հետո, ստորագրել և ստացել է քվեաթերթիկը: Անօրինական քվեարկությունը կանխվել է ԸՔ հլ դիտորդի կողմից:
- ՏԸՀ քվեաթերթիկը կնքող անդամները մշտապես չէին ստուգում նաև ընտրողի անձը հաստատող փաստաթղթերը, որպեսզի հավաստիանան ընտրողի ինքնության վերաբերյալ: ՏԸՀ այդ անդամներին ԸՔ հլ դիտորդների կողմից այս խախտումը մատնացույց անելուց հետո նրանք իրենց գործողությունները պատճառաբանում էին նրանով, թե իբր վստահում են ընտրողներին և հարկ չեն համարում ստուգելու նրանց անձը հաստատող փաստաթղթերը: Սակայն ԸՕ 57-րդ հոդվածի 4-րդ կետը միանշանակ պահանջում է՝ «Հանձնաժողովի՝ քվեաթերթիկները կնքող անդամը, համոզվելով ընտրողի՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ, քվեաթերթիկի վրա կնիք է դնում»: Այսպիսով, ՏԸՀ անդամները մեկնաբանելով օրենքը, գործել են ինքնական ձևով: ՏԸՀ անդամներն այսպես են գործել, օրինակ, թիվ 4/5, 9/44, 9/45 տեղամասերում:
- Թիվ 4/17 տեղամասում քվեաթերթիկը կնքող անդամն ընդհանրապես չուներ տեղամասն ընդգրկող հասցեների ցուցակը: Ուստի և չէր կարող և չէր էլ փորձում հավաստիանալ ընտրողի ինքնության մեջ:
- Թիվ 4/8 տեղամասում քվեարկողին անմիջապես ցուցումներ էր տալիս և ուղղորդում՝ ու՛մ ընտրել ՏԸՀ անդամ Լարիսա Թադևոսյանը: Նա, կանգնած լինելով անմիջապես քվեախցիկի մոտ, քվեաթերթիկում գտնում և ընտրողին մատնացույց էր անում այն անունը, որի օգտին նա պետք է քվեարկեր: ԸՔ հլ դիտորդի ահազանգից հետո էլ նա շարունակեց իր գործելակերպը: ՏԸՀ նախագահը ևս դրականորեն չարձագանքեց դիտորդի ահազանգին:
- Ընտրողների մեծաքանակ կուտակումներ ու խառնաշփոթ էր տիրում թիվ 4/8 տեղամասային կենտրոնում:
- 2 հոգով նույն քվեախցում միաժամանակ քվեարկություն կատարելու բազմաթիվ դեպքեր են արձանագրվել թիվ 4/17, 4/18, 4/5, 9/14, 9/44 և այլ տեղամասերում: Խախտվել է քվեարկության գաղտնիությունը:
- Չիրկիզվող պահարանը չի եղել թիվ 4/14 տեղամասային կենտրոնում : Դիտորդի դիտողությունից հետո միայն այն բերվել է տեղամասային կենտրոն:
- ՀՀ ոստիկանության աշխատակիցների անհարկի տևական ներկայություն է արձանագրվել թիվ 9 ընտրատարածքի համարյա բոլոր տեղամասային կենտրոններում:
- Թիվ 9/12 տեղամասում 3 ընտրողի թույլ է տրվել քվեաթերթիկները քվեարկող՝ զգել՝ առանց դրանք կնքելու: Հայտնաբերելով սխալը՝ ընտրողներն այդ մասին գրավոր կերպով տեղեկացրել են ՏԸՀ-ին: ՏԸՀ նախագահը, խորհրդակցելով ԸԸՀ նախագահի հետ, նույն ընտրողներին նոր քվեաթերթիկներ է հատկացրել: ՏԸՀ-ն երկու դեպքում էլ գործել է՝ «ԸՕ» պահանջները խախտելով:
- Նույն իրավիճակը կրկնվել է թիվ 4/23 տեղամասում: Գևորգ Ղազարյանին և Սոֆիա Միխայելիին թույլ են տվել չկնքված քվեաթերթիկները զգել քվեարկող, ինչից հետո նույն ընտրողներին հատկացվել են նոր քվեաթերթիկներ՝ կրկնակի քվեարկություն կատարելու համար:
- Թիվ 9/6 տեղամասում 3 ընտրողի, թեև նրանց անունը չի եղել ընտրացուցակում, ՏԸՀ-ն թույլ է տվել քվեարկել առանց դատարանի վճռի:
- Թիվ 9/45 տեղամասում մեկ կապոցի քվեաթերթիկների ետևի մասում հայտնաբերվել է միայն հանձնաժողովի քարտուղարի ստորագրությունը: Այդ

քվեաթերթիկներով, մինչ փաստը հայտնաբերելը, քվեարկել են 7 ընտրող: ԸԸՀ ցուցումով որոշվել է հաշվարկի ժամանակ այդ 7 քվեաթերթիկները համարել անվավեր: Փաստորեն՝ ընտրական հանձնաժողովի ոչ գիտակ գործողությունների պատճառով 7 ընտրողի ընտրելու իրավունքը խախտվել է:

Ղիտորդների իրավունքների սահմանափակումները

- ԸՔ հկ ղիտորդին ՏԸՀ-ն թույլ չի տվել տեղամասային կենտրոնում ազատորեն տեղաշարժվելով ղիտարկումներ իրականացնել 9/25 տեղամասում:
- Թիվ 9/15 տեղամասում քվեարկության գործընթացի ավարտից հետո, մինչ ձայների հաշվարկը սկսելը, ԸՔ հկ ղիտորդին և վստահված անձանց հեռացրել են տեղամասային կենտրոնից: Նրանց առաջարկվել է տուն գնալ և վերադառնալ տեղամաս երկու ժամից, երբ, ՏԸՀ հավաստիացմամբ, պիտի բացվեր քվեատուփը և սկսվեր ձայների հաշվարկը:
- Թիվ 9/18 տեղամասում ժամը 7:00-ին ԸՔ հկ հավատարմագրված ղիտորդին ՏԸՀ-ն թույլ չի տվել մուտք գործել տեղամասային կենտրոն, և ղիտորդը հնարավորություն չի ունեցել ղիտարկելու ընտրական հանձնաժողովի գործողությունները մինչ ընտրատեղամասի բացվելը:
- Թիվ 4/11, 4/4 տեղամասերում ԸՔ հկ ղիտորդին թույլ չեն տվել մոտիկից ղիտարկելու ընտրողներին քվեաթերթիկներ հատկացնելու, քվեաթերթիկները հաշվարկելու գործընթացները:
- ԸՔ հկ ղիտորդին և վստահված անձանց թիվ 4/10 ՏԸՀ-ն թույլ չի տվել հարմար վայրից, ազատ տեղաշարժվելով ղիտարկելու քվեաթերթիկների հաշվարկը:

Վստահված անձանց իրավունքների չարաշահումը

Արձանագրվել են վստահված անձանց կողմից տեղամասային կենտրոնում քարոզչության և ընտրողներին ուղղորդելու դեպքեր: Այսպես՝

- Թիվ 4/14 տեղամասում Հովհաննես Շահինյանի վստահված անձ Էդուարդ Աշուրյանը բազմիցս մարդկանց խմբերի է ուղեկցել տեղամասային կենտրոն՝ նրանց ակնհայտորեն ցուցում տալով՝ ու՛մ ընտրել: Անգամ, այլ վստահված անձանց և ղիտորդի ղիտողություններից հետո նա, կոպտելով վերջիններիս, շարունակել է նույնկերպ գործել:
- Թիվ 4/08 տեղամասում Հովհաննես Շահինյանի վստահված անձ Արսեն Մովսիսյանը ձայների հաշվարկի ժամանակ շարունակ իր ձեռքն էր առնում ՏԸՀ նախագահի կողմից քվեատուփից հանված քվեաթերթիկները, ստուգում դրանք, հրահանգում ՏԸՀ անդամներին, իր կարծիքը պարտադրում, թելադրում և այլն:
- Թիվ 9/34 տեղամասում՝ որպես Ռ. Խաչատրյանի վստահված անձ է ներկայացել ոմն Ռուբեն Սարուխանյան, որը, ըստ համայնքապետի թեկնածուի շտաբի հայտարարության, չի հանդիսացել իրենց ներկայացուցիչը և թիվ 9 ԸԸՀ-ում հավատարմագրված չի եղել: Փաստը բացահայտվել է Ռ. Խաչատրյանի՝ հավատարմագրված վստահված անձի՝ ժ. 12:00-ին ըտրատեղամաս մուտք գործելուց հետո միայն: ԸՔ հկ ղիտորդի հավատմամբ, ԸԸՀ ներկայացուցչի՝ տեղամաս ժամանելու պահին արդեն Ռ. Սարուխանյանը տեղամասում չի եղել:

Տեղամասային կենտրոնների անհարմարությունները

Անհարմարավետ, նեղ ու փոքր, վատ լուսավորվող տարածքներում էին տեղադրված թիվ 9/13, 9/19, 9/2, 9/25, 9/35 ընտրատեղամասային կենտրոնները, որոնցում ընտրագործընթացների լիարժեք ձևով անցկացման համար համապատասխան պայմաններ հնարավոր չէր ստեղծել:

Նախընտրական քարոզչությանը վերաբերող դրույթների խախտումները և անօրինական քարոզչությունը քվեարկության օրը

- Խախտվել է նախընտրական քարոզչությունը հավասար հիմունքներով իրականացնելու օրենսդրական պահանջը (ԸՕ, հոդված 18, առաջին կետ):
- Չի պահպանվել նաև հոդված 22-ի 4-րդ կետի պահանջը: Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ու աշխատակիցներն իրենց վերապահված լիազորությունները գործադրել են թեկնածուների միջև անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով:
- Համատարած կերպով չի պահպանվել ԸՕ 21-րդ հոդվածի երկրորդ կետի պահանջը. համայնքների ղեկավարների կողմից համայնքների տարածքներում չեն առանձնացվել հատուկ տեղեր քարոզչական պաստառներ փակցնելու համար: Դրանք փակցված են եղել ամենուրեք, ինչը հնարավոր չէր դարձնում մրցակցող բոլոր կողմերի համար հավասար պայմանների ապահովում:
- Խախտվել են ԸՕ-ի 23-րդ հոդվածի առաջին և երրորդ կետերի պահանջները: Ընտրողներին ավտոմեքենաներով տեղամասեր բերելով կամ ընտրելու իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմողներին տեղափոխելով ու ծառայություններ մատուցելով՝ ծավալուն քարոզչություն է արվել:
- Տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև հիսուն մետր շառավղով խմբերի ներկայություն և նրանց, հատկապես «թաղի տղաների» կողմից ընտրողների վրա ազդեցություն է գործադրվել բոլոր ընտրատեղամասերում:
- «Թաղի տղաներն» ազատապես ելումուտ էին անում թիվ 4/17, 4/18, 9/13, 9/45 տեղամասային կենտրոններում՝ ներգործության փորձեր անելով ընտրողների վրա:
- Թիվ 4/14 տեղամասային կենտրոնում շարունակաբար ելումուտ է արել 18 տարեկան մի ընտրող՝ միջամտելով և խանգարելով ՏԸՀ աշխատանքները, անհարգալից վերաբերմունք դրսևորելով ընտրագործընթացների մասնակիցների հանդեպ, ցուցում տալով ընտրողներին և այլն:
ՏԸՀ անդամների դիտողություններն անտեսվել են կարգազանցի կողմից: Սիայն ոստիկանների միջամտությունից հետո վերջ է տրվել անկարգություններին:
Դրականորեն պետք է գնահատել ՀՀ ոստիկանության աշխատակիցների աջալրջությունն այս տեղամասերից շատերում, որոնց ջանքերով տեղամասերին հարող տարածքներում մարդկանց այս կուտակումները պարբերաբար վերացվել են, փորձ է արվել վերջ տալ անօրինական քարոզչությանը:

Եզրակացություն

Չնայած ընտրությունների օրվա համեմատաբար խաղաղ մթնոլորտին, նախընտրական շրջանում տեղ գտած թերությունները, ընտրակարգի

խախտումները, ընտրացուցակների անձշտությունները հարցականի տակ են դնում ընտրագործընթացների անաղարտության աստիճանը:

Վերոհիշյալ թերությունների հաղթահարման դեպքում է միայն հնարավոր ընտրական գործընթացների հանդեպ ընտրողների վստահության աճը, երբ մեզանում առկա լոկ քվեարկությունը կվերաճի իրոք ազատ, անկաշկանդ, համոզմունքներից բխող կամարտահայտության:

Լինելով ՀՀ քաղաքացիներ՝ ԸՔ հկ անկողմնակալ դիտորդները խորապես գիտակցում են ընտրագործընթացի բարեփոխման և իրապես ազատ, արդար, թափանցիկ ընտրությունների կայացման անհրաժեշտությունը, առանց որոնց անհնար է մեր երկրի ժողովրդավարական ապագան:

Առաջարկություններ

- Ընտրողների վերջնական ցուցակների ճշգրտության համար պատասխանատու լիազոր մարմնի ստորաբաժանումների կողմից ժամանակին և հնարավորինս որակով ճշգրտել ընտրացուցակները՝ ՏԻՄ ընտրությունների հետագա փուլերում քվեատուների ընտրելու իրավունքը պահպանելու և ընտրախախտումները բացառելու նպատակով:
- «ՀՀ ընտրական օրենսգրքի» համապատասխան բարեփոխմամբ բացառել քվեարկված քվեաթերթիկներն ընտրական հանձնաժողովների կողմից դիտարկելու և, այսպիսով, ընտրողների կամքի վրա ներազդելու ամեն մի հնարավորություն: Վերանայել հատկապես «ԸՕ» այն դրույթը, որով սահմանվում է, որ քվեաթերթիկը պետք է կնքվի՝ նրանում ընտրողի կողմից նշագրում կատարելուց հետո:
- Նախընտրական քարոզչության «ԸՕ»-ով սահմանած կարգի խախտումները բացառելու համար՝ ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների կողմից խստացնել վերահսկողությունը իրավասու անձանց հանդեպ: Պաշտոնական քարոզարշավի ընթացքում՝ օրենքով սահմանված դրույթների պահանջները խախտողներին, ըստ ՀՀ օրենսդրության, ենթարկել պատասխանատվության:
- Քվեարկության գաղտնիությունը ապահովելու նպատակով ԿԸՀ որոշմամբ սահմանել քվեախցերի նոր կառուցվածք:
- ԿԸՀ սահմանած կարգով ՏԸՀ կնքելու համար պատասխանատու անդամներին հրահանգել՝
 - մինչ քվեաթերթիկը կնքելը պարտադիր կերպով ստուգելով ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը՝ համոզվել ընտրողի՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ:
 - քվեաթերթիկը կնքելիս պահպանել քվեարկության գաղտնիությունը՝ թույլ չտալով քվեարկության արդյունքների դիտարկում:
- Թույլ չտալ վստահված անձանց և դիտորդների՝ ԸՕ-ով սահմանված իրավունքների խախտումները և սահմանափակումները:
- Խստիվ արգելել կողմնակի անձանց երկարատև ներկայությունն ու անօրինական քարոզչությունը տեղամասային կենտրոններում:
- Ընտրակարգի կոպիտ խախտումներ թույլ տված՝ ընտրական հանձնաժողովների անդամներին, վստահված անձանց, դիտորդներին և ընտրագործընթացներին

մասնակցած այլ անձանց, համաձայն ՀՀ օրենսդրության, ենթարկել խիստ պատասխանատվության:

- ԿԸՀ որոշմամբ՝ ընտրատեղամասային կենտրոնների տեղակայման վայրն ընտրելիս՝ հաշվի առնել ընտրագործընթացները լիարժեքորեն անցկացնելու համար նրանց համապատասխանությունն ու հարմարավետությունը:

«Ընտրությունը քունն է» հասարակական կազմակերպությունը հայաստանյան ընտրությունները դիտարկող ամենախոշոր կազմակերպությունն է: Այն ունի 4000 կամավորներ, կառույցներ՝ հանրապետության 10 մարզերում եւ Երեւանի բոլոր համայնքներում: «Ընտրությունը քունն է» հկ առաքելությունն է նպաստել Հայաստանում արդար եւ թափանցիկ ընտրությունների կայացմանն ու ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, տեղական ինքնակառավարման համակարգի իրական կայացմանն ու ընտրողների առջեւ կառավարման մարմինների հաշվետու դառնալուն, խթանել քաղաքացիների մասնակցությունը համայնքային կառավարմանը եւ Հայաստանի Հանրապետության ընտրողներին ընտրագործընթացների վերաբերյալ տրամադրել անաչառ, ճշգրիտ և հրատապ տեղեկատվություն: